ԱՐՑԱԽԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ[59]

Դավիթ Աղաջանյան

Բանալի բառեր՝ գյուղատնտեսություն, ագրոարդյունաբերկական համակարգ, տնտեսություն, համախառն ներքին արդյունք, գյուղմթերքների արտադրություն, ագրոբիզնես, շահութահարկ, ներդրումներ, շուկա, միջին անվանական աշխատավարձ, տնտեսական աճ:

Գյուղատնտեսությունը տնտեսության նյութական բարիքների արտադրության կարևորագույն ճյուղերից մեկն է, որը երկրի բնակչությանն ապահովում է բարձրորակ սննդամթերքով, իսկ թեթև և սննդի արդյունաբերությանը՝ հումքով: Գյուղատնտեսությանը ոչ միայն ագրոարդյունաբերական համալիրի, այլև ամբողջ տնտեսության առաջվել բարդ ու աշխատատար ճյուղն է և պահանջում է ներկայիս պահանջներին համապատասխան արդյունավետ կազմակերպում [1]: Գյուղատնտեսությունը վճռական դեր ունի Արցախի սոցիալ տնտեսական իրավիճակի բարելավման և պարենային անվտանգության ապահովման գործում:

Պետք է նշել, որ նոր արտադրահարաբերություններին անցնելը, ինչպես նաև արցախյան հակամարտությունն իրենց ազդեցությունն են թողել մեր երկի ագրովերամշակման ոլորտի վրա: Հետպատերազմյան տարիներին համեմատ՝ որոշակիորեն նվազել են գյուղմթերքների վերամշակման արտադրական հզորությունների օգտագործման մակարդակը և արտադրության ծավալները:

Արցախի հանրապետության իշխանությունների կողմից վերջին տարիներին այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները նպատակաուղղված են եղել նպաստելու գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառի զարգացմանը, որը կբարձրացնի ագրոարդյունաբերական համակարգը նոր մակարդակի և հնարավորություն կնձեռի տեղական արտադրանքով ոչ միայն բավարարելու ներքին սպառողների պահանջմունքները, այլ նաև դուրս հանելու արտաքին շուկաներ:

Գտնում ենք, որ ներկա պայմաններում Արցախի գյուղատնտեսության ոլորտին անհրաժեշտ է անցում դեպի ինտենսիվ զարգացմանը, ինչպես նաև երկրում պետք է մշակվեն պետական նպատակային ակտիվ աջակցության նոր մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն Արցախի շրջաններում տարբեր մշակաբույսերի ցանքատարածությունների ու նրանց համախառն բերքի ծավալների ավելացմանը, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների (ֆերմերների) եկամտաբերության մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսության բնագավառում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, գիտական նվաճումների և նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը, ենթակառուցվածքների, պարենային անվտանգության մակարդակի և մասնագիտական խորհրդատվության համակարգի ձևավորմանն ու զարգացմանը:

Իսկ ագրարային ոլորտում շուկայական հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացման փուլերում գյուղատնտեսական վերամշակող ու արտադրանք թո-

---

[59] Հոդվածն ընդունվել է 03.03.2018:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ տնտեսագիտության, կառավարման և ՏՀ ամբիոնը

ղարկող ձեռնարկությունները կարևոր նպաստ են բերում երկրի կայուն սոցիալ-տնտեսական և գյուղական վայրերի զարգացման գործում:

Արցախի գյուղատնտեսության ոլորտը ուսումնասիրելիս հիմնական շեշտը պետք է դնել հետևյալ կարևոր դրույթների վրա.

-նախ պետք է ուսումնասիրել Արցախի գյուղատնտեսության ներկա իրավիճակը և գնահատել զարգացման հեռանկարները,

-անհրաժեշտ է վերլուծել ներկայումս ոլորտին ուղղվող պետական աջակցությունը և ներկայացնել այդ համատեքստում նոր արդիական մոտեցումներ,

-պետք է բացահայտել գյուղատնտեսության ոլորտի ագրոբիզնեսի հիմնախնդիրները, պարզաբանել դրանց լուծման կարևորությունը երկրի ագրոարդյունաբերական համալիրի զարգացման գործում,

-պարզաբանության կարիք ունի նաև արգրոարդյունաբերական համակարգում գործող ձեռնարկությունների զարգացման հիմնախնդիրները,

-կարևոր է նաև բնորոշել ագրոհամակարգի առկա ձեռքբերումները և առաջիկայում կատարվելիք միջոցառումները:

Պետք է նշել, որ գյուղատնտեսությունը եղել և շարունակում է մնալ Արցախի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը, որպես բնակչության՝ պարենի նկատմամբ կենսական պահանջմունքների բավարարման աղբյուր, զբաղվածության ապահովման բնագավառ, ինչպես նաև գյուղական բնակավայրերի զարգացման հիմք և տնտեսական աճի հիմնական բաղադրիչ: Ոլորտի ռազմավարական նշանակությունը և մտավոր ու ֆիզիկական մեծ ջանքեր կլանելու հատկությունն ու աշխատանքների կազմակերպման յուրահատկությունը պահանջում են կառավարման համակարգային և առանձնահատուկ մոտեցումներ:

Ժամանակակից գյուղատնտեսության զարգացման միակ ճանապարհն արդյունաբերականացումն է, այսինքն՝ ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, նորագույն տեխնոլոգիաների և կառավարման համակարգերի կիրառումը, ինչի շնորհիվ է միայն հնարավոր արդյունավետ օգտագործել ոլորտի ներուժը և ապահովել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձր ցուցանիշներ [2]:

Գյուղատնտեսության ինտենսիվ զարգացմանը դեռևս խոչընդոտում են մի շարք գործոններ, որոնցից են ոլորտի բարձր ռիսկայնությունը, խոշոր ապրանքային տնտեսությունների ցածր տեսակարար կշիռը, արտադրական (նաև ոռոգման համակարգեր) և շուկայական (ֆինանսական) ենթակառուցվածքների թերզարգացվածությունը:

2007-2016 թվականներին Արցախի կառավարությունը, հավատարիմ մնալով գյուղատնտեսության ոլորտում իր որդեգրած ակտիվ քաղաքականությանը, իրականացրել է մի քանի տասնյակից ավելի ծրագրեր ու միջոցառումներ՝ կիրառելով աջակցության նոր մեխանիզմներ ու գործիքներ:

Արցախի գյուղատնտեսության ոլորտը վերջին 7 տարիների ընթացքում ունեցել է դինամիկ աճ (Գծապատկեր 1) [3]:

Գծապատկեր 1



Նշենք, որ 2010-2016 թվականներին մեր երկրի գյուղատնտեսության ոլորտում արձանագրվել է 8,9 տոկոս միջին տարեկան աճ:

2016թ. հունվար-սեպտեմբերին գյուղատնտեսության համախառն արտադրանքի 56.5 տոկոսը՝ կազմել է բուսաբուծության համախառն արտադրանքը, իսկ 43.5 տոկոսը բաժին է ընկել անասնաբուծության ենթաոլորտի արտադրանքին (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2



Միջին անվանական աշխատավարձը գյուղատնտեսության ոլորտում կազմել է շուրջ 117.0 հազ.դրամ [4]:

Նշենք, որ մեր երկրի ագրոարդյունաբերական համալիրն (ԱԱՀ) իրենից ներկայացնում է ժողովրդավարական տնտեսության ճյուղերի ինքնահատուցումը՝ կապված գյուղատնտեսության զարգացման հետ, նրա արտադրության սպասարկման և գյուղատնտեսական արտադրանքը մինչև սպառողին հասցնելը [5]:

ԱԱՀ-ի կարևոր կապող օղակը գյուղատնտեսությունն է: Այն առանձնահատուկ տեղ է գբաղեցնում ոչ միայն ԱԱՀ-ում, այլև ամբողջ ժողտնտեսությունում: Իսկ գյուղատնտեսական արտադրանքի ծավալի ավելացումն իր հերթին պահանջում է վերջ-

նական արտադրանքի վերամշակման, պահպանման, փոխադրման և իրացման համար համապատասխան ճյուղերի և արտադրությունների զարգացում [6]:

Պետք է նաև նշել, որ ԱԱՀ-ը ներկայումս ինտեգրվում է տնտեսվարման այլ բնագավառների հետ, քանի որ շուկայական մրցակցությունը խնդիրներ է առաջացնում ոչ միայն գյուղմթերքների արտադրության, այլև իրացման ոլորտներում: Հետևաբար, ագրոարդյունաբերական համալիրի հիմնական ոլորտները չեն կարող արդյունավետ գործել առանց գյուղմթերքների արտադրության և իրացման շուկայի ենթակառուցվածքի առկայության:

Շուկայի ենթակառուցվածքի գործառույթները հիմնականում կրում են ներդրումային, միջնորդային, կազմակերպչական, ապահովագրական բնույթ (Գծապատկեր 3) [7]:

Շուկայի ենթակառուցվածքը հանդես է գալիս որպես կազմակերպչական ձևերի համախումբ, որը նպաստում է առքուվաճառքի, մատուցվող ծառայությունների անխափան իրականացմանը և շուկայական գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

Գծապատկեր 3

Ագրոբիզնեսի շուկայի ենթակառուցվածքի գործելու մեխանիզմը



Ագրոբիզնեսի շուկայի ենթակառուցվածքային հիմնական տարրերից է ապահովագրական համակարգը, որը բխում է ագրոարդյունաբերական համալիրի գործունեության ռիսկերի կառավարման անհրաժեշտությունից և պայմանավորվում է մի շարք հանգամանքներով: Լինելով բազմաքանակ մասնակիցների համախմբված գործունեության արդյունք՝ ագրոարդյունաբերական համալիրի գործունեությունը կարող է հեշտությամբ ձախողվել՝ մասնակիցներից որևէ մեկի թերի գործելաոճի պատճառով: Ագրոբիզնեսի պարագայում կարևորվում է »գյուղմթերքների արտադրություն – մատակարարում – վերամշակում – իրացում« շղթայի ներդաշնակ գործունեությունը, որը խափանման ռիսկ է պարունակում նաև ներդրումների երկարաժամկետայնության, խոշոր ֆինանսական ռեսուրսների ներգրավման և ագրոարդյունաբերական շուկայի առանձնահատկությունների պատճառով:

Անհրաժեշտ է նաև ոլորտի նկատմամբ պետական երաշխիքը և աջակցությունը: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, պետությունը ուղղակիորեն միջամտում է գյուղատնտեսական վարկերի երաշխավորման գործընթացին և դրանով իսկ նվազեցնում ագրարային ոլորտում բանկերի ֆինանսական միջոցների տեղաբաշխային ռիսկայնությունը: Ընդ որում այլ ոլորտում պետական միջնորդությունը հանդես է գալիս թե ուղղակիորեն, թե անուղղակիորեն: Առաջինի դեպքում՝ գյուղատնտեսական վարկերի գծով պետության կողմից տրամադրվում են հարկային և ֆինանսական արտոնություններ: Երկրորդի դեպքում՝ պետությունը կարող է բանկերին փոխհատուցել գյուղատնտեսական վարկերից ձևավորված վնասը կառավարության պահուստաֆոնդի հաշվին (Գծապատկեր 4):

Գծապատկեր 4

Ագրոբիզնեսի վարկավորման խթանման ուղիները



Ինչպես ագրոհամակարգի այնպես էլ ագրոբիզնեսի ներկայացուցիչներին պետությունը իր կողմից ստեղծված հիմնադրամների միջոցներով արտոնյալ վարկերի տրամադրման մեխանիզմ է առաջարկում: Մաքսիմալ վարկային տոկոսը տվյալ դեպքում կազմում է 6 տոկոս, որը շատ շահավետ է տնտեսվարող սուբյեկտի համար: Այն իրականացնում է ինչպես՝ Արցախի ներդրումային հիմնադրամի, որը ապահովում է փաստորեն ագրոբիզնեսի ոլորտի փոքր և միջին ընկերություններին 6 տոկոսանոց վարկերի տրամադրում, այնպես էլ՝ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմ-

նադրամի միջոցներով՝ որը գյուղացիական տնտեսություններին ապահովում է մինչև 6 տոկոս վարկային միջոցներ: Վերջինս նաև ապահովում է գյուղացիական տնտեսություններին լիզինգի ստացման հնարավորություններով:

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը [8]: Ինչպես նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ արտադրողի կողմից Արցախում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը ազատված է ԱԱՀ-ից [9]:

Հարկ է նաև նշել, որ Արցախի գյուղատնտեսությունը ներկայումս ունի մեծ պոտենցիալ հետագա զարգացում ապահովելու համար:

Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին ոլորտը ապահովել է միջինում 9-10%, այնուամենայնիվ, ոլորտը կարիք ունի լուրջ պետական աջակցության: Հարկ է նաև նշել, որ մեծամասամբ ոլորտը զարգացել է հենց երկրում իրականացվող պետական ծրագրերի հաշվին, և շատ քիչ՝ օտարերկյա ներդրումների:

Վերջին տարիներին երկրում դինամիկ կերպով զարգանում է նաև ագրոբիզնեսը: Այն ընդգրկում է գյուղատնտեսական արտադրանքի վերամշակովի արտադրությամբ զբաղվող ձեռնարկություններն ու կազմակերպությունները: Վերջիններիս գյուղատնտեսական արտադրանքը՝ պատրաստի սննդի տեսքով ներկայացվել է սպառման ինչպես Արցախի, այնպես էլ արտերկրի սպառողներին:

Արցախի գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառը ներառում է պտուղ-բանջարեղենի, խաղողի, կաթի, մսի վերամշակման ճյուղերը, ինչպես նաև ալյուրի, բուսական յուղի և այլ արտադրությունները:

Արցախն ունի նաև կայուն գործող ագրոարդյունաբերական համալիր, որի գլխավոր խնդիրը ներկայումս բնակչության պահանջմունքները սննդամթերքով և ժողովրդական սպառման առարկաներով առավելագույն բավարարումն է:

Երկրում լուրջ ուշադրություն պետք է դարձվի նաև իրականացվող ագրարային քաղաքականությանը և պարենային անվտանգության խնդիրներին, տվյալ համատեքստում կարևոր է նաև պարենային անվտանգության նոր ծրագրի մշակումը: Ուշադրության տակ պետք է լինի նաև երկի ագրոպարենային համակարգը, որը գյուղատնտեսության, գյուղատնտեսական արտադրանք վերամշակող արդյունաբերության, գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ու մատակարարումների ոլորտների ամբողջություն է [10]: Արցախում մինչ ածմ դեռևս չի ընդունվել գյուղատնտեսության հետագա տարիների զարգացման հայեցակարգը:

Պետության կողմից սուբսիդավորման, նպատակային ծրագրերի իրագործման, բարենպաստ օրենսդրական դաշտի ձևավորման միջոցով պետք է նաև խթանվի գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը, ագրոպարենային համակարգում կոոպերատիվների ստեղծումը, վերջիններիս գիտական, կադրային, տեղեկատվական և խորհրդատվական ապահովումը: Ներկայումս Արցախում չունենք գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության համապատասխան կարգ, չնայած կարգի ընդունումը ամրագրված է »Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին« ԼՂՀ օրենքում [2, հոդված 29]: Տվյալ կարգի ընդունման դեպքում, գյուղատնտեսական կոոպերատիվների պետական աջակցության հիմնական ուղղություններ կհանդիսանան՝

➢ *արդիական տեխնոլոգիաների ներդրման և տեխնիկական հագեցվածության աջակցությունը.*

➢ *գյուղատնտեսական հումք վերամշակող, գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսներ մատակարարող և արտադրանքն իրացնող ընկերությունների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատման աջակցությունը.*

➢ *արտահանման ներուժ ունեցող կոոպերատիվների արտադրանքի մրցունակությունն արտերկրում բարձրացնելու նպատակով գործարար համաժողովների, ցուցահանդեսների, տոնավաճառների մասնակցության աջակցությունը.*

➢ *խորհրդատվության, ուսուցման և արժանահավատ տեղեկատվության տրամադրման աջակցությունը.*

➢ *գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրմանն աջակցությունը.*

➢ *գյուղատնտեսական վարկերի մատչելիության բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացումը.*

➢ *կրթության, վիճակագրության, հետազոտությունների գործընթացում կոոպերատիվների առաջնահերթ ներառումը:*

Նշենք նաև, որ ներկայումս Արցախի ագրոբիզնեսն ունի մի շարք ներկայացուցիչներ, որոնք տնտեսական գործունեությունն իրականացնում են ինչպես ԼՂՀ-ում, այլ երկրից դուրս: Այդ արգրոարդյունաբերության ներկայացուցիները գործում են Արցախի սննդահամային, կաթնամթերքի, մսամթերքի և ալրաձավարային արյունաբերություններում:

Ինչպես ամբողջ գյուղատնտեսության, այնպես էլ ագրոհամակարգի զարգացման ուղղությամբ Արցախի հանրապետության իշխանությունների կողմից տարվում են լուրջ աշխատանքներ [11]: Միայն 2016թ. ընթացքում հենց պետական աջակցության շնորհիվ ոլորտում արձանագրվել է ավելի քան 10% աճ՝ նախորդ տարվա նկատմամբ:

Կարևոր է նաև Արցախում աշխատանքներ իրականացնել, որոնք կնպատակաուղղվեն գյուղական վայրերում ագրոբիզնեսի ներկայացուցիչներ »ստեղծելու« մոտեցումներին: Ներակումս այդ աշխատանքները որոշակիորեն իրականացվում են Արցախի ներդրումային և գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամների համատեղ ջանքերով: Այս գործում ունի նաև որոշակի ներդրում Ամերիկյան հայ բերերար Թրպանջյանի հիմնադրամը, որը ԼՂՀ գյուղական վայրերում բիզնես իրականացնելու համար տնտեսավարող սուբյեկտներին ապահովում է արտոնյալ վարկերի ստացում՝ երեք տարով մինչև 3.5 մլն դրամի չափով:

Արցախի ագրոարդյունաբերական համակարգի զարգացումից կախված է նաև երկրի պարենային անվտանգության ապահովման խնդիրը, ուրեմն ինչքան զարգացած լինեն ագրոբիզնեսի ներկայացուցիչները, ինչքան կարողանան իրենց բիզնեսի ընթաքում ապահովել կառավարման նոր ժամանակակից մոտեցումներ, այնքան երկրի բնակչությանն իրեն կզգա առավել անվտանգ ու ապահով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Բայադյան Ա.Հ. ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, Եր., 2013, էջ 5;
2. Նույն տեղում, էջ 7;
3. www.stat-nkr.am
4. Նույն տեղում:
5. Հակոբյան Լ.Լ., Ճեպեճյան Շ.Ա. »Գյուղատնտեսության էկոնոմիկա«, ուսումն. ձեռնարկ, Եր., 2012, էջ 15:
6. Նույն տեղում, էջ 18;
7. Малыш М.Н. Аграрная экономика, учебник 2-ое изд.,Спб., 2002, с. 248
8. «Շահութահարկի մասին» ԼՂՀ ՀՕ-47 օրենք, 09.01.1999թ., հոդված 35
9. «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ ՀՕ-43 օրենք, 18.12.1998թ., հոդված 15
10. «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ԼՂՀ ՀՕ-47-Ն օրենք, 22.12.2016թ., հոդված 3
11. www.minagro.nkr.am

Ամփոփագիր

Արցախի գյուղատնտեսության ոլորտի զարգացումը և ագրոբիզնեսի զարգացման արդի հիմնահարցերը

Դավիթ Աղաջանյան

Գյուղատնտեսությունը եղել և շարունակում է մնալ Արցախի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը, որպես բնակչության՝ պարենի նկատմամբ կենսական պահանջմունքների բավարարման աղբյուր, զբաղվածության ապահովման բնագավառ, ինչպես նաև գյուղական բնակավայրերի զարգացման հիմք և տնտեսական աճի հիմնական բաղադրիչ: Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին Արցախի գյուղատնտեսության ոլորտը ապահովել է միջինում 9-10%, այնուամենայնիվ, առաջիկա ապագայում ոլորտը ունի մեծ պոտենցիալ հետագա զարգացում ապահովելու համար:

РЕЗЮМЕ

Рост отрасли сельского хозяйства Арцаха и основные вопросы развития агробизнеса

Давид Агаджанян

***Ключевые слова**: сельское хозяйство, агропромышленный комплекс, экономика, валовый внутренний продукт, производство сельхозпродуктов, агробизнес, налог на прибыль, инвестиции, рынок, средняя номинальная зарплата, экономический рост.*

Сельское хозяйство было и продолжает оставаться одной из ключевых сфер экономики Арцаха, являясь как источником удовлетворения насущных потребностей населения в отношении продовольствия, так и основой развития сельских населенных пунктов и основным компонентом экономического роста. Несмотря на то обстоятельство, что сельское хозяйство Арцаха за последние годы обеспечивало в среднем рост в 9-10%, тем не менее, и в ближайшем будущем от имеет большой потенциал для обеспечения дальнейшего развития

SUMMARY

The growth of the agriculture sector of Artsakh and main issues of agribusiness development

David Aghadjanyan

Keywords. *agriculture, agro-industrial complex, economy, gross domestic product, production of agricultural products, agribusiness, profit tax, investments, market, average nominal wage, economic growth.*

Agriculture has been and continues to be one of the key spheres of Artsakh's economy, both as a source to meet the immediate needs of the population regarding provision, and the basis for the development of rural settlements and the main component of economic growth. Despite the fact that agriculture of Artsakh has ensured an average growth of 9-10% in recent years however, in the near future, this undustryl will provide a great potential for further development.